ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱՎՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության
և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր,
բանասիրական գիտությունների դոկտոր
ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ արտասահմանյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 821.19.0

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՉԱՓԱԾՈ ՄԱՏՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԷՋԵՐԸ

Բանալի բառեր. աղոթք, խորհուրդ, ճամփորդ, իրիկնահաց, կարոտ, թախիծ, քարափ, սպի, բաց վերք:

Ключевые слова: молитва, совет, путник, ужин, тоска, грусть, печаль, шрам, незаживающая рана.

Keywords: prayer, council, traveler, dinner, melancholy, sadness, scar, unhealing wound.

Համո Սահյանը 1986թ. հրատարակեց «Դաղձի ծաղիկ» բանաստեղծությունների ժողովածուն, որը վերջինն էր նրա կենդանության օրոք: Մոտ վեց տարի նա համարյա ոչինչ չէր տպագրում, եթե հաշվի չառնենք մամուլի մի քանի հրապարակումները:

1992թ.-ին նա տպագրության հանձնեց 80-ականների վերջերին և անկախության տարիներին գրած բանաստեղծությունների մի նոր ժողովածու, որը, ինչպես իրեն յուրահատուկ մարգարեությամբ կանխագուշակում էր, «մի քանի բանաստեղծությունների պատճառով համարձակություն չեն ունենալու տպագրել: Հետմահու գուցե թե լույս տեսնի»:

Բանաստեղծը ճիշտ էր գուշակում. ժողովածուն չէր տպագրվում «ոչ թե մի քանի բանաստեղծությունների պատճառով», այլ անհեթեթ պատճառաբանություններով՝ «դրամական միջոցներ չկան, որակյալ թուղթ չկա», այն դեպքում, երբ գրական շուկան հեղեղված էր պոեզիայի հետ հեռավոր կապ անգամ չունեցող շքեղ հրապարակումներով:

Արժանին պետք է մատուցել բանաստեղծին անմնացորդ սիրով նվիրված երջանկահիշատակ Ալեքսան Կիրակոսյանին ու Շչորս Դավթյանին, ովքեր 90-ականների ծանր տարիներին մեծ ներդրում ունեցան

գրողներին բարոյական աջակցություն ցուցաբերելու, նրանց հետ կապված մի շարք հարցեր լուծելու, հոգսերն ինչ-որ չափով թեթևացնելու գործում:

Հենց նրանց նախաձեռնությամբ ու հովանավորությամբ 1998-ին՝ բանաստեղծի մահվանից հինգ տարի հետո, բավական փոքր տպաքանակով լույս տեսավ «Ինձ բացակա չդնեք» ժողովածուն: 2003-ին այն վերահրատարակվեց. ընթերցողները զգում էին Հ. Սահյանի բացակա ներկայությունը, ում բանաստեղծության պահանջարկը միշտ էլ, անկախ հանգամանքներից ու մթնոլորտային փոփոխություններից, անչափ մեծ է եղել:

Անհերքելի է, որ յուրաքանչյուր բանաստեղծ ունի աշխարհընկալման իր տեսանկյունը, աշխարհում կատարվող անցուդարձերը կենսագրության իրողություններ դարձնելու իր բանաձևը[1], ինչը ստեղծագործական կյանքի բոլոր հանգրվաններում ունի համակարգային նշանակություն:

Թվում էր, թե 80-ականների վերջերին արդեն յոթանասունն անց բանաստեղծն իր նոր գործերում հազիվ թե կարողանա ինչ-որ նոր բան ասել, ամենաշատը՝ կարող էր ներկայանալ իր ստեղծած բանաստեղծական կառույցի «ճակատային մասում» կոսմետիկ փոփոխություններ անելով:

Սակայն Հ. Սահյանի պարագայում այսպես մտածելը պարզապես աբսուրդ է, և դրա վառ ապացույցը «Ինձ բացակա չդնեք» ժողովածուն է, որտեղ ևս մեծ բանաստեղծը շարունակում է իր բեղմնավոր որոնումները, գտնում պատկերաստեղծման նոր եղանակներ ու մեթոդներ, բանաստեղծական ավանդական կառույցներ, նոր գույներ ու հնչերանգներ:

Հ. Սահյանի պոեզիայի յուրահատկությունն ինչպես «բնապատկերի մեծ դիմանկար, դիմանկարի մեջ՝ բնապատկեր» (Լ. Օզերով) տեսնելու անկրկնելի վարպետությունն է, այնպես էլ ժամանակի ու տարածության տրված զգացողությունը: Հատկապես՝ ժամանակի, որը բանաստեղծի համար «կարևոր է այն առումով, որ վերացական հասկացություն չէ, այլ կեցության անհրաժեշտություն: Ի՞նչ ենք ժառանգել անցյալից և ինչ ենք ստեղծում. գոյության իմաստն է սա, և ստուգվում է նաև անհատի քաղաքական հետագիծը հասարակություն, պետություն, հայրենիք հասկացություններում»[2]:

Հ. Սահյանի պոեզիայում ժամանակի ու տարածության միասնականությունն ունի ոչ միայն բովանդակային, այլև ձևակառուցվածքային գործառույթներ, և հենց նրանով են պայմանավորված

---

[1] Ստեփանյան Ռ., Բառը ձգտում է հավիտենության, ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Երևան, 2011, № 1, էջ 70:

[2] «Գարուն», Երևան, 1984, № 6, էջ 34:

բանաստեղծի ոճական յուրահատկությունները, զուտ սահյանական ձեռագիրը:

Բանաստեղծը հաճախ «խախտում է» ժամանակի անցյալ-ներկա-ապագա պայմանական սահմանները՝ ներկայի տիրույթներում տեսնելով անցյալի իրողություններ ու ապագայի, շատ հաճախ՝ անորոշ ու մտահոգիչ նշաններ:

Այդ միասնությամբ է պայմանավորված բանաստեղծի աշխարհընկալման տեսանկյունը, որն իր հարցազրույցներից մեկում նա այսպես է բանաձևում. «Ամբողջ կյանքում երազել եմ Հովի. Թումանյանի «Պատրանքի» պես մի գործ ստեղծել («Վեր է կացել էն սարում»): Ինչո՞ւ: Որովհետև դա բանաստեղծություն չէ, վեպի ամփոփագիր է այդ մի քանի տան մեջ վիթխարի մի պատմություն կա:

Դեռևս 1980-ականներին այդպիսի մի «ամփոփագիր» նա ստեղծեց, որը անանց տառապանքի մասին է, մեր պատմության ողբերգական ընթացքի մասին»[3]:

Գալիս է հոտը…
Ներին առջևից,
Գամփռը հետևից,
Ուղտը մի թևից,
Ամեն, ամեն ինչ
Խառնելով իրար՝
Ալեկոծում է բլուրներն ի վար
Սև հեղեղի պես[4]:

Այդպիսի մի նոր «ամփոփագրով» է բացվում «Ինձ բացակա չդնեք» ժողովածուն: Բանաստեղծությունը գրվել է Սումգայիթի ու Բաքվի սահմռկեցուցիչ դեպքերի անմիջական ազդեցությամբ, որոնք, անկասկած, 1915-ի շարունակությունն էին: Բայց ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա, մահն անզոր է կոտրելու մի ժողովրդի ոգին, որը վերընձուղվելու զարմանալի ունակությամբ է օժտված.

Նորից եկել, հին ցավերն են մեզ խոցում
(Խոր տնքոց եմ լսում հեռու Դեր-Զորից):
Մեզ վրա մահն իր ուժերն է փորձում
Եվ դողում են մահվան ձեռքերը նորից:
Մենք դեռ հազար հոգեվարք ենք մերժելու,
Քեռու կանչն է լսել Դավիթը հորում,

[3] ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Երևան, 2015, № 1:

[4] Սահյան Հ., Երկերի ժողովածու 2 հատորով, № 2, Երևան, 1984, էջ 114:

Թե մեռնել կա, հայերեն ենք մեռնելու,
Ինչպես մաքուր ցորենի հունդը հողում[5]:

Այդպես է եղել դարեր շարունակ. «Փալանած եզան բութ կճղակներով» քոչվոր ցեղերը տրորել են հանդ ու հորովել, և մեր դարավոր թշնամիները կարծում էին, թե այդպես էլ պիտի լինի:

Սակայն 1980-ականների վերջերի համազգային զարթոնքը հիմնովին փոխեց մեր մասին ունեցած թե՛ բարեկամների, թե՛ թշնամիների կարծիքը: Մենք արդեն անմռունչ կերպով դեպի զոհասեղան գնացող մատաղի գառ չէինք, մեր մեջ արդեն փոթորկվում էր Նժդեհի ոգին, ու ամրապնդվում էր «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» սկզբունքով ապրելու հոգեբանությունը:

Բանաստեղծն իր ժողովրդի հետ էր, ու հանուն նրա արդար դատի, պատրաստ էր ցանկացած զոհաբերության.

Մեր գոտիները կձգենք մի քիչ,
Մեզ համ ու հոտից կզրկենք մի քիչ,
Մեր մկանները մի քիչ կպրկենք,
Մեզ՝ կտրող ցավի ճանկից չփրկենք:

Կտաքանանք մեր սրտի կրակով,
Կրքի պաշարով դեռ հանդուրժելի ,
Արցախ կտանենք մեր վրեժն արյան,
Օրերի ոգին մեր փետրվարյան:

Սպառնալիքը կհեգնենք թուրքի,
Մեր երթն անվթար գարուն կհանենք (150):

Համազգային զարթոնքը միավորեց մեզ, դարձրեց մի բռունցք, փոխեց մեր մտածելակերպն ու հոգեբանությունը և, որ ամենակարևորն է, մեր սրբազան հողը մաքրեց «ժանգ ու բորբոսից»:

Թվում էր, թե այս ամենը պիտի ունենա իր տրամաբանական շարունակությունը, երկիրը պիտի ծաղկի ու շենանա, հայ մարդը պիտի ապրի վերջապես արժանապատիվ կյանքով: Բայց ի՞նչ եղավ. համազգային հզոր մակընթացությանը հաջորդեց հուսախաբության ու հավատի կորստի նույնքան հզոր տեղատվություն.

---

[5] Սահյան Հ., Ինձ բացակա չդնեք, Երևան, 2009, էջ 5: Այսուհետև տեքստում կնշվի միայն ժողովածուի էջը:

Ինձ համար ամեն ինչ կորած է,
Էլ ոչ ոք և ոչինչ չունեմ,
Ծամում եմ իմ բաժին չոր հացը,
Եվ քունս չի տանում, որ քնեմ:
Փոխվել են դերերն ու տեղերը,
Բայց նույնն է երախը վիշապի…
Սրա՞նք այս երկրի տերերը,
Աղոթեմ, որ մահս շտապի (151):

Սահյանական պայծառ ու անխառը գույները երիզվում են թանձր եզրագծերով, ակվարելային պատկերները մի տեսակ մթագնում են:

Զարթոնքից հետո պիտի լույս լիներ, մութ խորշերն ու խոռոչները կենսատու շողերով լցնող, ստվերները հալածող լույս: Բայց՝

Եղավ ստի հրավառություն,
Ու խաբեության հարսանիք եղավ…
Ու կյանքս եղավ անվերջ դառնություն,
Եվ արվեստիս տունն անտանիք եղավ:
Սուրբս լիրբ եղավ, Աստվածս՝ մռայլ,
Հրճվանքս՝ շինծու, տքնանքս՝ ձրի (27):

Զարթոնքի շրջանի օրերը դառնում են «մռայլ ու ահարկու, անորոշ ու գորշ», բայց ամենասարսափելին հավատի կորուստն է («Անցյալը թողել ենք անցյալում, / Եվ փակ են գալիքի դռները»):

Բայց բաց են մայր բնության դարպասները, Գյազբել ու Տատնա ձորերն ու քարափները տանող ճանապարհները, հայրենի եզերքի հյուրընկալ դռները, բաց են աշխարհի ծանր բեռն իրենց ուսերին առած մարդկանց սրտերը, որոնց մեջ դեռևս սպասում կա «Մի գեղեցիկ օրվա/, Մի կատարյալ կյանքի/, Որ գալու է անշուշտ/, Ինչքան էլ հապաղի»:

Հայրենի բնաշխարհում դեռ «Պատգամ կա խղճի/, Ծննդկանի գավաթ/ Ու հնձվորի կուժ կա/, Կան մատյան ու գիր/, Հայրենների կարոտ/, Հորովելի հուշ կա»:

«Ինձ բացակա չդնեք» ժողովածուն աչքի է ընկնում ժանրային բազմազանությամբ՝ բանաստեղծություն, քառյակ, տրիոլետ, հայրեն, ու հարստացնում է ավանդական ժանրերի վերաբերյալ մեր իմացությունը: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ժողովածուում տեղ գտած հայրեններն ու տրիոլետները: Պահպանելով այդ ժանրերին յուրահատուկ կառուցվածքային տարրերը՝ Հ. Սահյանը դրանք հարստացնում է բովանդակային նոր գծերով, հաղորդում արդիական ոգի ու շունչ: Հատկապես հայրեններում ավելի լիարժան կերպով է տրոփում մեր գրականության՝ Գողթան երկերից սկիզբ առնող երակը՝ բացահայտելով գոյի, կյանքի ու մահվան, անցավորի ու մնայունի վերաբերյալ

տասնամյակների ընթացքում ձևավորված սահյանական կենսափիլիսոփայությունը: Հայրեններում ևս Հ. Սահյանն իր զգայուն ձեռքը պահում է ժամանակի զարկերակին, զգում նրա տրոփյունն ու տատանումները, որոնք խիստ մտահոգիչ են.

Մեզանից ի՞նչ են ուզում,
Ախր մենք ո՞ւմ ենք վնասել,
Եղբայրներ շատ ունեինք,
Ինչո՞ւ ենք մենակ մնացել…
Չի բռնում նրանց լեզուն
Մի անգամ մեր լավն ասել,
Թե ինչ է, հանկարծ
Փորձել ենք մեր հին ցավն ասել: (83)

Խառն ու խառնակ են ժամանակները, և «Նորից թափառ մի ցեղ / Մեզ մեզնից խլել է ուզում/, Մեր ազնիվ արյունը տաք/ Թեյի տեղ խմել է ուզում/, Մեր արտը դարձնել արոտ/, Մեր վիզը ծռել է ուզում», բայց մենք ուրիշ ենք արդեն՝ «Էհ, թող գա, թե մեղքերի ճահճի մեջ խրվել է ուզում»:

Բանաստեղծն աշխարհին նայում է իր անցած տարիների բարձունքից, նայում է սիրով ու կարոտով, մահն արհամարհելով («Մահն ո՞ւմ շունն է, որ մահից վախենամ»):

Մի ամբողջ կյանքի «ամփոփագրով» է փակվում «Ինձ բացակա չդնեք» ժողովածուն.

Ձեր լռությունը զնգում,
Զրնգում է ձորով մեկ
Ձեր լռության համերգում
Ինձ բացակա չդնեք…
Ոչ խոստումներ, ոչ երդում,
Չսպասեք ու չքննեք …
Անվերջ, անշարժ ձեր երթում
Ինձ բացակա չդնեք: (167)

«Ինձ բացակա չդնեք» ժողովածուն թեպետ փակում է Հ. Սահյանի չափածո մատյանի վերջին էջերը, բայց իր բացակա ներկայությամբ էլ բանաստեղծը մնում է ընթերցողի հետ:

Մ. Գ. Գիլավյան, Մ. Մ. Գիլավյան

Համո Սահյանի չափածո մատյանի վերջին էջերը

Ամփոփում

Հոդվածում քննարկվում է Հ. Սահյանի «Ինձ բացակա չդնեք» ժողովածուի թեմատիկ բազմազանության, կառուցվածքային ու

լեզվառճական յուրահատկությունների հետ կապված խնդիրներ: Մասնավորապես նշվում է, որ 80-ականների համազգային զարթոնքի շրջանում գրված բանաստեղծությունների պայծառ տրամադրություններն ու գույները 90-ականներին փոխվում են տխրության ու ցավի ելևէջներով, թանձր գույներով, ոգևորության մակընթացությանը հաջորդած տեղատվության ալեբախումներով:

Բոլոր դեպքերում, սակայն, ժողովածուի բանաստեղծություններում տրոփում է ժամանակի զարկերակը, որի վրա տասնամյակներ շարունակ մեծ բանաստեղծը պահում էր իր զգայուն ձեռքը:

М. Г.Гилавян, М.М.Гилавян

Последние страницы поэзии Амо Сагияна

Резюме

В статье рассматриваются особенности разнообразия тематики, структуры и стилистики сборника стихотворений А.Сагияна «Не ставьте мне отсутствие». В частности, выделяется тема радости в стихотворениях, написанных в годы подъёма национального сознания в 80-е, переливы ярких красок чувств, ликования и радости, сменяющиеся в 90-е мотивами грусти и боли, уходящими надеждами, разбитыми судьбами, столкновениями и коллизиями жизни. В книге есть пульсирующее время, которое передает голос и чувства поэта.

M. G. Gilavyan, M. M. Gilavyan

The last pages of Sahyan's poetry

Summary

The article examines the peculiarities of the variety of subjects, structure and stylistics of the collection of poems by A.Sagiyan "Do not put me a lack" In particular, the theme of joy in poems written in the years of the rise of national consciousness in the 80s, the shimmering of bright paints of feelings, jubilation and joy, replaced in the 90th by the motives of sadness and pain, by departing hopes, broken destinies, collisions and collisions of life. The book has a pulsating time, which conveys the voice and feelings of the poet.